



Երկօրեայ սեմինար՝ Ջերմուկում

Մարտի 2-ից 3-ը Ջերմուկում տեղի է ունեցել ՀՀ-ի Հայաստանի և ՀՀ-ի Արցախի Երիտասարդական միությունների համատեղ սեմինարը, որի ժամանակ ներկայացվել է Հայաստանի ներկայ քաղաքական իրավիճակը:

Սեմինարի նպատակն էր երի-

տասարդներին ներկայացնել, թե որն է այսօր Դաշնակցության անելիքը, և թե՛ կուսակցությունը ինչ աշխատանքներ է իրականացնում երկիրը ստեղծած իրավիճակից դուրս բերելու ուղղությամբ:

Դասախոսություններով հանդես են եկել՝ «Կամուրանի շարժում» ՀԿ նախագահ Հրանտ Մարգարեանը, ՀՀ-ի Հայաստանի ԳՄ ներկայացուցիչ Բշիստ Մարգարեանը, Հայ Օգնության միության Հայաստանի շրջանային վարչության ատենապետուհի Մարո Քեչիզեանը, ՀՀ-ի Բիւրոյի աշխատակազմի ղեկավար Մարգար Մկրտչեանը, հրապարակախօս-խմբագիր Վաչե Բրուտեանը:

Հարց ու պատասխանի միջոցով երիտասարդներն ստացել են իրենց յուզող հարցերի պատասխանները: Arfd.am

Հայաստանի սահմանները՝ նոր հնարաւոր հարւածների տակ. մեկ հոգին երկիրը բացայայտ տանում է նոր աղէտի

ՎԱՐԷ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ «Այլընտրանքային նախագծեր» խմբի համահիմնադիր



Այս իշխանության ցանկացած յայտարարություն նոր իրականություն է ստեղծում՝ նախորդից անելի վտանգատու ու անելի ռիսկային: Հենց հրահանգը եղաւ, լարած տիկնիկի նման բոլորը սկսեցին խօսել «Ջարթոնց»-ից ռուսների դուրսբերման մասին: Այստեղ հարցն օդանավակայանը չէ՛: Պայմանագրով ռուսները պահում են ԱՊՀ սահմանները, մասնատրապէս Թուրքիայի հետ սահմանը:

Չէ՛ շատ հաւանական է, որ նիկոլաւիէական արկածախնդրութեանը ռուսները պատասխանեն շատ հանգիստ. եթէ պնդում էք, ապա ոչ մի խնդիր, և ոչ միայն «Ջարթոնց»-ից ենք դուրս գալիս, այլև՝ միւս սահմաններից:

Ու մենք կը ստանանք նոր իրականություն բաց հայ-թուրքական սահման: Այն բաց է լինելու ոչ միայն թուրքական բանակի, այլև՝ բազմապիսի

զինեալ խմբերի, Միդիայից, Բրաքից անվերահսկելի խմբերի, խմբաբաժանների համար՝ սկսած տեղաբնակներից, վարձկաններից, մինչև քաղաքացիական հոծ խմբեր: Պատկերացնո՛ւմ էք ինչ իրականություն կարող է ստեղծել սահմանային մեր մարզերում, և ապակայունացման ի՛նչ պոտենցիալ ունի հետանկարը:

Այս պահին արդէօք Հայաստանն ունի՞ նոր սահման պահելու և նոր լարածութեան օջախ գալելու ռեսուրս: Թուրքիան, վստահաբար, մեծ սիրով պրոքսի ուժերով կը ցանկանայ ապակայունացնել իրավիճակը Հայաստանում:

Ես բերեցի միայն մէկ օրինակ, բայց այս իշխանութեան քայլերը, յայտարարությունները մէկը մէկից վտանգատու են: Միայն պատմական արկածախնդիրները կարող են խօսել նոր պատերազմի վտանգի մասին և գու-

զահեռ խզել յարաբերությունները անվտանգային միակ իրական համակարգի հետ: Մէկ հոգին երկիրը բացայայտ տանում է նոր աղէտի, միայնակ ճակատագրական որոշումներ է կայացնում, անում է բոլոր վտանգատու յայտարարություններն ու քայլերը:

Ողբերգությունն այն է, որ դիմացը չկայ մէկ այլ ՄԷԿ. այս պահին մենք բոլորս՝ հարուստ, ազդեցիկ, ինտելեկտուալ, ազնիւ, մտահոգ, հարիւրաւոր կուսակցություններով, ազնիւ սրբազաններով, ընդդիմադիր բազմապիսի ֆորմատներով համատեղ չենք ձգում ինստիտուցիոնալ ՄԷԿ-ի, որ նրան կասեցնենք:

Սա արտադր վիճակ է, աննորմալ իրականություն է, որը պէտք է փոխել, ու լինել կոշտ՝ բոլոր խանգարողների հանդէպ:



Քաղաքագետ. «Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարները լուռ համաձայնութեամբ ձգձգում են բանակցային գործընթացը»

Են և շատ բացայայտ են հետապնդում վերջիններիս կողմից: Բնականաբար, հենց այդ ծրագրերով ու դրանց յետևում կանգնած տեղությունների գործունեության արդիւնաւէտութեամբ են պայմանաւորած բոլոր այն զարգացումները, որոնք այսօր տեղի են ունենում Հարաւային Կովկասում և որոնք պէտք է կանխորոշեն մեր տարածաշրջանի ապագան:

Արեւմուտքն ամէն ինչ անում է, որպէսզի Ռուսաստանը դուրս մղի Հարաւային Կովկասից: Որպէս այդ խնդրի լուծման ուղի նրանք տեսնում են հայ-ադրբեջանական և հայ-թուրքական հակամարտությունների կարգաւորման միջոցով տարածաշրջանում ռուսական ռազմական ներկայութիւնն անհիմնաւոր և ժամանակավրէպ դարձնելը:

Ռուսաստանն իր հերթին պայքարում է ոչ միայն մեր, այլև յետխորհրդային ողջ տարածաշրջանում ազդեցութիւնը վերանվազնելու և մեծացնելու համար: Սակայն այդ պայքարում Ռուսաստանի իշխանութիւնները որոշակի առաջնահերթութիւններ են սահմանել աշխարհաքաղաքական մրցակցութեան ճակատներում՝ առաջնայնութիւնը տալով ոչ թէ Հարաւային Կովկասին, այլ Ռուսաստանին:

Հարաւային Կովկասում Ռուսաստան-Արեւմուտք առճակատման յաջորդ հարթութիւնը տարածաշրջանի կոմունիկացիոն հնարաւորութիւններն ու ենթակառուցածքներն են: Եւ սա հենց այն ուղիսն է, որտեղ Թուրքիան առաջարկ ունի թէ՛ Ռուսաստանին, և թէ՛ Արեւմուտքին: Հայ-ադրբեջանական բանակցային գործընթացը նոյնպէս կախած է կոմունիկացիաների հարցում աշխարհաքաղաքական մրցակցութեան ելքից:

Հայ-ադրբեջանական բանակցային գործընթացը և յատկապէս խաղաղութեան պայմանագրի ստորագրումը պայմանաւորած են լինելու ոչ թէ Ալիեւի ու Փաշինեանի ջանքերով, այլ աշխարհաքաղաքական մրցակցութեան արդիւնքում ձեւաւորած ուժերի ու ազդեցութիւնների նոր բալանսով: Մինչ այդ մրցակցութեան արտադր Հայաստանն ու Ադրբեջանը շարունակելու են գործիք լինել անելի մեծ տեղութիւնների ձեռքում:

Panorama.am

Տիգրան Արախամեան.

«Լաւրովն անուղղակի «տեղեակ պահեց», որ ՀԱՊԿ-ում չմնալն ու ՌԴ-ի հետ յարաբերութիւնների նշանոցի իջեցումը հետեւանքներ կուՆենայ»



Աժ «Պատիւ ունեմ» խմբակցութեան պատգամաւոր Տիգրան Արախամեանը գրել է.

«Եւ այսպէս, ինչպէս և կանխատեսելի էր, ՌԴ ԱԳ նախարարն անորոշաբար Փաշինեանի՝ ՀԱՊԿ-ում գործունեութեան ստեղծման վերաբերեալ յայտարարութեանը, նշելով, որ Հայաստանը պէտք է յստակ կողմնորոշւի՝ մնում է, թէ՛ հեռանում:

Իհարկէ այդ համատեքստում ՌԴ պաշտօնեան անուղղակի «տեղեակ պահեց», որ չմնալն ու, առհասարակ, ՌԴ-ի հետ յարաբերութիւնների նշանոցի իջեցումը նաեւ հետեւանքներ կունենայ:

Ենթադրաբար դա նշանակում է ՌԴ-ի՝ ՀՀ-ի նկատմամբ իրականացուող քաղաքականութեան վերանայումներ, ինչը նշանակում է քաղաքական, ռազմական համագործակցութիւնից մինչև տնտեսական: Այնպէս չէ, որ ՀՀ իշխանութիւնն այս դիտարկը նոր է ծաւալում կամ դրա մէջ լրջութիւն դնում, հարցն այն է, որ ՌԴ-ն փորձում է վերջնականացնել հաշիւները՝ հասկանալու, թէ սա սովորական շանտաժ է, թէ՛ Հայաստանի նոր ընթացքը դէպի ԵՄ:

ՌԴ-ն սա անում է, որպէսզի հետագայում իր կոշտ հակազդեցութիւնը ՀՀ-ում և արտաքին աշխարհում ամբողջութեամբ լինի ընկալելի, իսկ թէ դրանք ի՞նչ հետեւանքներ կունենան և ի՞նչ ծաւալով կը լինի, կախած է իրադարձութիւնների ընթացքից:

Բնչ կանի այս իրավիճակում հայաստանեան իշխանութիւնը: Այո՛, կը գնայ ամենավատ ճանապարհով՝ ինչպէս նախորդ բոլոր կարեւոր որոշումներում: Panorama.am

Արմէն Պետրոսեան.

«Այլեւս անընդունելի է ընտրողաբար մօտեցումը Ռուսաստանի եւ նրա հեղինակած ինտեգրացիոն ձեւաչափերի նկատմամբ»



Արեւելագետ Արմէն Պետրոսեանը «Ֆէյքթըք»-եան իր էջում գրել է.

Անթալիայի դիւանագիտական ֆորումի շրջանակում կայացած մամուլի ասուլիսի ընթացքում ՌԴ ԱԳ նախարար Սերգէյ Լաւրովի յայտարարութիւնն առ այն, թէ Մոսկուան ակնկալում է Երեւանից յստակեցում տարբեր ինտեգրացիոն կառոյցներում, ներառեալ ՀԱՊԿ-ում փոխարձակութեան սկզբունքով պայմանաւորաւորութիւնների կատարման հարցում, որոշակիորէն ուրազածում է Ռուսաստանի մարտավարական քայլերի շրջանակը Հայաստանի հետ խնդրայարոյց յարաբերութիւններում:

Կարելի է ենթադրել, որ հասկանալի պատճառներով արդէն ՌԴ-ում նախագահի ընտրութիւն-

ներից յետոյ՝ պայմանականօրէն սպրիդին, Մոսկուան կը ձեւակերպի Երեւանին ուղղած անելի յստակ հարցադրում՝ «կամ մնում էք Ռուսաստանի հետ բոլոր ինտեգրացիոն ձեւաչափերում, կամ լքում բոլորը» համապատասխան հետեւանքներով:

Ասել է թէ, այլեւս անընդունելի է ընտրողաբար մօտեցումը Ռուսաստանի և նրա հեղինակած ինտեգրացիոն ձեւաչափերի նկատմամբ:

Կարելի է նաեւ ենթադրել, որ այս հարցում Ռուսաստանին քաղաքական և քարոզական լայն աջակցութիւն է ցուցաբերելու Բեյրութում: Բակ առաջիկայ ամիսը ծառայելու է թէ՛ բանավճէրի, քաղաքական և քարոզական նոր գործողութիւնների համար:



Սիրանուշ Սահակյան. «Արցախի նախկին ղեկավարության վերաբերեալ իրական որոշումներն արդիւնաւէտ գործունէր են, որպէսզի գէներացւի քաղաքական ճնշում»

Մեկտեմբերի 19-ին, երբ Ադրբեյջանը ռազմական գործողութիւններ սկսեց 9 ամիս բրկադայի մէջ պահուող Արցախի Հանրապետութեան եւ իսաղաք բնակչութեան դէմ, արցախահայութիւնը գերապատմութեան սպառնալիքի տակ բռնի տեղահանուեց:

Մեկտեմբերի 27-ին Հակարիի կաւորարար Ադրբեյջանը գերեզմաններ Արցախի նախկին պետնախարար Ռուբէն Վարդանեանին եւ ՊԲ նախկին իրամանատարի տեղակալ Դաիթ Մանուկեանին: Մեկտեմբերի 28-ին Արցախի նախկին արտգործնախարար Դաիթ Բարսեղեանը յայտարարութիւն տարածեց, որ Ադրբեյջանական կողմը պահանջել է իր ժամանակումը Բարոյ համապատասխան հետաքննութեան համար:

Ադրբեյջանն այնուհետեւ գերեզմաններ էր Արցախի նախկին երեք նախագահներին՝ Արկաղի Դուրանեանին, Բակո Սահակեանին եւ Արայիկ Յարութիւնեանին, ԱՇ ներկայիս նախագահ Դաիթ Բախախանին եւ ՊԲ նախկին իրամանատար Լեւոն Մնացականեանին: Նրանց բողոքին մի քանի յօդուածով անհեթեթ մեղադրանքներ են առաջադրել:

168.am-ի հետ զրոյցում Միջազգային եւ համեմատական իրաւունքի կենտրոնի նախագահ, իրաւապաշտպան Սիրանուշ Սահակյանն ասաց, որ Արցախի Հանրապետութեան ռազմաքաղաքական նախկին ղեկավարների դէպքում խնդիրներն անելի ծանր ու բարդ են:

«Նրանց ձեռնարկումը չի ունեցել իրական նախադրեալներ, քաղաքական նպատակներով իրագործող գործընթաց է: Հասկանալի է,

որ եթէ Ադրբեյջանը զիսագին է պահանջել անմեղ քաղաքացիների ռազմագերիների կամ գերիների առնչութեամբ, ապա պարզ է, թէ ինչպիսի մեծ պարտքն ու յաւակնութիւններ կունենայ Արցախի բարձր ղեկավարութեան պարագայում», - նշեց Սիրանուշ Սահակյանը:

Իրաւապաշտպանի գնահատմամբ Արցախի ղեկավարութեան ձեռքարկումը նաեւ ուժի ցուցադրութեան եւ վերջնական յաղթանակի սիմուլիկա ունի: Այն լուրջ ուղերձ էր թէ՛ Ադրբեյջանի ներքին լարարին, որպէսզի ամրապնդէր հասարակութեան ռազմատեղեւ հոգեբանութիւնը, թէ՛ հայերին, որպէսզի վերջակէտ դրի Արցախի ինքնորոշման իրաւունքին:

«Հասկանալի է, որ այստեղ շատ բարդ լուծելի են հարցերը, քանի որ գործ ունենք նախկին ղեկավարութեան հետ, անցեալ ու կշիռ ունեցող մարդկանց, պետականութեան կայացման մէջ ներդրում ունեցած ուժեղ անհատների հետ: Իրաւական գործընթացներն անպայմանօրէն իրենց ազդեցութիւնը թողնելու են, երաշխաւորած չէ, որ իրական որոշումներն անմիջապէս կամ արագ կատարման են ենթարկուելու: Ադրբեյջանի կողմից: Անգամ այս պարագայում իրական որոշումները շատ լաւ ու արդիւնաւէտ գործունէր են որպէսզի գէներացւի քաղաքական ճնշում: Եթէ իրական ակտերին համակցեն պատժամիջոցների կիրառում, վստահ եմ՝ Ադրբեյջանի վարքը կը դառնայ կառավարելի: Այստեղ անհրաժեշտ է միջազգային աջակցութիւն: Եթէ կանք դրսեւորեն Հայաստանին իրապէս աջակցելու,

եւ միջազգային հանրութիւնն օգտի իր գինանցի այնպիսի գործիքներից, ինչպիսիք պատժամիջոցներն են, ապա Ադրբեյջանի վարքը խիստ կանխատեսելի կը լինի, որի պարագայում կապահովելի պատանդների ազատ արձակումը», - շեշտեց Սիրանուշ Սահակյանը:

Ինչ վերաբերում է պատանդներին պահելու պայմաններին, իրաւապաշտպանն ասաց՝ նրանց վերաբերեալ որոշակի տեղեկատուութիւն տրամադրում է ընտանիքի անդամներին:

«Հասկանալի է, որ Բարոյն պահուող պատանդների պահման վայրի վերաբերեալ ադրբեյջանական կողմի հրապարակած լուսանկարները չեն արտացոլում իրերի իրական պատկերը՝ թէ՛ ռազմագերիների, թէ՛ բարձրաստիճան պաշտօնեաների պարագայում: Ադրբեյջանը ցուցադրական լուսանկարներ է հրապարակել հիմնականում դրա մասնակիցն է դառնում Ադրբեյջանի մարդու իրաւունքների պաշտպանը: Նրանք փորձում են ձեռնարկել, որ Ադրբեյջանը յարգում է միջազգային մարդասիրական նորմերը: Առնագն հայրենադարձաձեռնի վկայութիւններից մեզ յայտնի է, որ նրանց տարել են գեղեցիկ կահավարձ սենեակներ, գրադարաններ, տեսակցութիւնների սրահներ, արուել են լուսանկարներ, սակայն դա նրանց մշտական պահման վայրը չի եղել: Անելին՝ լուսանկարահանումներից առաջ եւ յետո, անգամ ընթացքում, նրանք ենթարկուել են հոգեբանական ու ֆիզիկական բռնութիւնների», - եզրափակեց Սիրանուշ Սահակյանը:

Քաղտեխնոլոգ. «Արեւմուտքից ու Ռուսաստանից կայ կոնսենսուս՝ փոխելու ղեկավարին»

Alpha News-ի ուղիղ եթերում քաղտեխնոլոգ Գարէն Քոչարեանն ասել է՝ դրսից են ուզում, որ Հայաստանում ընտրութիւններ լինեն:

«Քանի դեռ այս իշխանութիւնը չի ֆիքսել, որ Հայաստանում ընտրութիւններ ուզում են դրսից, նշանակում է՝ իրենց համար վտանգաւոր է: Իրենք էին այդ ինֆորմացիայի արտահոսքը անում: Ճիշտ է՝ չէին ասում, որ ընտրութիւններ լինելու են, բայց չէին էլ հերքում: 2-3 օր առաջ Ալէն Սիմոնեանը փաստացի հերքեց՝ ասելով, որ իրենք պատասխանատուութիւնից չեն փախչելու: Իհարկէ, ծիծաղելի է այդ արտայայտութիւնը մի ուժի կողմից, որը միշտ պատասխանատու է, բայց մեղաւոր չէ:

Սահմանադրութեան մասով չեն հերքել, եւ չեն լսել ոչ մի տեղ, որ ասեն չէ, չեն ուզում փոխել: Առայժմ դրա, յամենայնդէպս, կոշտ հերքում, ինչպէս Ազգային ժողովի ընտրութիւնների մասով էր, չեմ լսել, միգրացի եղել է: Որովհետեւ դա նաեւ գալիս է նրանից, որ, կարծում եմ, նաեւ հարցումներ են արւել: Ենթադրում եմ նրա համար, որ հասկանան իշխող ուժի վարկանիշը գնալով ընկնում է, ընդ որում՝ բաւականին սրբնթաց է ընկնում», - ընդգծել է Գարէն Քոչարեանը:

Քաղտեխնոլոգը նկատել է՝ մարզերում անելի շատ են իշխող ուժի կողմնակիցները, քան մայրաքաղաքում: «Երկու տարի յետոյ, երբ լինեն հերթական ընտրութիւնները, այդտեղ իշխանութեան շանսերն արդէն կը լինեն գրոյական: Պարզ է, որ մարզերում



անելի շատ են իշխանութեան կողմնակիցները, քան Երեւանում: Երեւանի մոդելով՝ երեւի թէ ուզում էին նաեւ անցկացնել Ազգային ժողովի ընտրութիւնները: Ունեն տեւալներ, փորձ են արել ընտրութիւններ անցկացնելու, տեսել են՝ չի ստացում, հասկանում են, որ արդէն կայ կոնսենսուս է: Արեւմուտքից, եւ Ռուսաստանից՝ փոխելու անուագն այս ղեկավարին:

Եթէ ղեկավարը իշխող ուժից լինի, առաջինը հենց ինքն է ամէն ինչը ներսից քանդելու, սովորաբար այդպէս է լինում: Ոչ թէ փոխանցում են իշխանութիւնը, սովորաբար հենց փոխողը ինքն էլ սկսում է ափիւրէլ այն, ինչ եղել է», - եզրափակել է քաղտեխնոլոգը:

Դիտորի Ռոդիոնով. «Փաշինեանի ռեժիմը պատրաստուում է Ռուսաստանի հետ յարաբերութիւնների լիակատար խզման»



Ինովացիոն զարգացման ինստիտուտի աշխարհաքաղաքական հետազոտութիւնների կենտրոնի տնօրէն Դիտորի Ռոդիոնովը Alpha News-ին մեկնաբանել է լուրերն այն մասին, որ «Ջարթնոն» օդանավակայանում ռուս սահմանապահների ներկայութեան հարցը Հայաստանի իշխող կուսակցութեան օրակարգում է:

«Սա ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի ռեժիմի կողմից նման ոչ բարեկամական առաջին քայլը չէ: Այս ամէնը տեղադրում է Հայաստանի ղեկավարութեան կողմից ձեռնարկուող վերջին քայլերի ընդհանուր խտրութեան մէջ: Հետեւաբար, այստեղ զարմանալու եւ վրդովելու ոչինչ չկայ: Այստեղ պէտք է հասկանալ, որ այս

ամէնը ընդհանուր ծրագիր է, որի նպատակն է Ռուսաստանի ամբողջական հեռացումն Անդրկովկասեան տարածաշրջանից:

Խօսքն այստեղ սահմանապահների մէջ չէ, որոնք բնականաբար, ոչ որի չեն խանգարում, այլ Ռուսաստանի հետ բարեկամութեան խորհրդանիշերի, հայ հասարակութեան հաստի ոչընչացման մասին է, որ Ռուսաստանը չի կարող լինել անվտանգութեան երաշխատու, ինչու վաշինեանական պաշտօնեաները փորձում են համոզել հայ ժողովրդին վերջին մի քանի տարիներին: Նրանք մանտրայի պէս պարբերաբար կրկնում են, որ Ռուսաստանը չի կարող Հայաստանի անվտանգութեան երաշխատու լինել», - ասել է Ռոդիոնովը:

Քաղաքագետի խօսքով՝ յաջորդ քայլերը կը լինեն Հասարակական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութիւնից (ՀԱՊԿ) Հայաստանի դուրս գալը եւ ռուսական ռազմակայանի դուրսբերումը Հայաստանից:

«Այսինքն նախ համարում են խորհրդանիշերը, ոչնչացում է հաստատու: Դրանից յետոյ գործն արդէն կը հասնի ՀԱՊԿ-ից իրական դուրս գալուն, արդէն ոչ թէ ստեղծմանը, այլ պաշտօնական դուրս գալուն: Եւ, իհարկէ, յաջորդ քայլը լինելու է Հայաստանից ռուսական ռազմաքաղաքի հեռացումը: Այս ամէնը չի կարելի արագ անել, քանի որ հասարակութիւնը կը վրդովի, հասարակութիւնը չի հասկանալ: Հասարակութիւնը դեռ ռուսամետ տրամադրութիւններ ունի, բայց ահա այսպիսի մանր քայլերով Փաշինեանի ռեժիմը պատրաստում է Ռուսաստանի հետ լիակատար խզման», - եզրափակել է Ռոդիոնովը:



Գագիկ Յարութիւնեան. «Սա ազգակործան հերթական քայլն է, որը համընկնում է թուրք-ադրբեյջանական շահերի հետ»

«Վերջին ջրջանում իշխանութիւնը ԱՇ նախագահը եւ իշխանական պատգամատուրները, մշտապէս խօսում են Հայաստանում ռուս սահմանապահների գտնուելու անկասկածաբարութեան մասին: Ամ քարտուղար Արմէն Գրիգորեանը վերջերս ասել էր, որ Ներքին Հանրում Ադրբեյջանի իրականացրած սադրանքի ժամանակ ռուս սահմանապահները խոչընդոտել են ԵՄ դիտորդների աշխատանքներին: Իսկ ԱՇ նախագահ Ալէն Սիմոնեանի խօսքով՝ ռուս սահմանապահները «Ջարթնոն» օդանավակայանում չպէտք է լինեն: Իշխանական պատգամատուր Արթուր Յովհաննիսեանն էլ խորհրդարանական ձեւագրոյցների ժամանակ հարցի առնչութեամբ ասաց իրենց անհանգստացում է ռուս սահմանապահների ներկայութիւնն օդանավա-

կայանում: «Այո, այդ հարցը մեզ անհանգրստացնում է, ինչպէս մեր շատ հայրենակիցների: Այդ հարցը մեր քաղաքական թիմի օրակարգում է, քննարկումներ են տեղի ունենում: Երբ քննարկումների արդիւնքում լինեն որոշումներ, այդ որոշումների մասին եւ բողոքս կլիմանանք»:

168.am-ի հետ զրոյցում Յանցային հետազոտութիւնների ինստիտուտի տնօրէն, քաղաքագետ Գագիկ Յարութիւնեանը խօսելով ՀՀ-ից ռուս սահմանապահների հնարաւոր դուրսբերման մասին, նկատել է՝ ինչպէս իշխանութիւնների միտք, այնպէս էլ սահմանապահներին հետաքննելու քայլը չի բխում ՀՀ շահերից, քանի որ, եթէ նրանց հետաքննում են, ի վիճակի են, օրինակ, պահելու հայթորքական սահմանը:

«Եթէ այս հարցը դիտարկենք Հայաստանի անվտանգութեան տեսանկիւնից, ապա դա այն աշխարհաքաղաքական մեծ նախադիմ էր, որն իրագործում է Հայաստանում իր

դուաճան ներկայիս ղեկավարների կողմից: Ակնյայտօրէն ՀՀ իշխանութեան նպատակն է Ռուսաստանին դուրս հանել այս տարածաշրջանից ու բերել Թուրքիային: Հիմա ուկրաինական ֆրոնտում Ռուսաստանի գործերը յաջող են ընթանում, նրանք անհանգստացած են ու իրենց գործերն արագացնում են, որպէսզի կարողանան այստեղ երկրորդ ճակատ բացել:

Իհարկէ, հասկանալի է, որ այդ ամէնը կատաստրոֆիկ իրավիճակ կը ստեղծի մեր սահմաններին, որովհետեւ ռուս սահմանապահներն են, որ պահում են Թուրքիայի հետ մեր սահմանը», - պարզաբանել է Գագիկ Յարութիւնեանը:

Քաղաքագետի խօսքով՝ եթէ ռուս սահմանապահներին դուրս բերեն եւ հայ-թուրքական սահմանը դառնայ անվերահսկելի, ապա հաշւած օրերի ընթացքում Հայաստանը թուրք-ադրբեյջանական տանդէմը կը վերածի «Արեւմտեան Ադրբեյջանի»: (Շար. 6-րդ էջում)



ԹԱԼՐԻԳԻ ԽՆԱՄԱՆԿԱԿ ՄԱՐՄՆԻ միջինքի երեկոյթը



Ատրպատական, ազգային առաջնորդարան, Թալրիգ-Չորեքշաբթի, փետրվարի 28-ի երեկոյան ժամը 20:00-ից սկսեալ, Թալրիգի եկեղեցիների Խնամակալ մարմնի կազմակերպությամբ, Մեծ Պահքի կեսի Միջինքի առիթով, տեղի ունեցաւ երեկոյթ, ազգային առաջնորդարանի «Համագապ Ոսկանեան» սրահում:

Երեկոյթը հովանաւորում էր եւ նախագահում՝ Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Ս. Գրիգոր արք. Զիֆթճեանը, Թեմական խորհրդի հետ միասին: Հանդիսութեան բացման եւ բարի գալստեան խօսքը կատարեց վարչութեան ատենապետուհի Էմմա Յարութիւնեանը: Նա ուրախութիւն յայտնեց, որ եկեղեցին միջնաբերդ լինելով իւրաքանչիւր համայնքի, կարողանում է ոչ միայն հոգեւոր տուրք հանդիսանալ տեւալ համայնքի, այլեւ հոգեւորապէս միաւորել դրա աստուածապաշտ գաւակներին:

Միջինքի նշանակութեան ու հոգեւորապէս մարդը կազմաւորելու բարձր արժեքի անդրադարձաւ Խնամակալ մարմնի անդամ Լուսին Դանդեանը: Մեծ Պահքի կեսի հասած լինելով, հաւատացեալ մարդը գիտակցում է թէ ունի դեռ 24 օրերի ժամանակահատուած, բարեպաշտօրէն կատարելու համար Աւետարանի այն պատւերները, որոնք եկեղեցական օրացոյցի տոյն օրերին, կարող է նա փոփոխութիւն առաջացնել հաւատացեալ մարդու կեանքում:

Թալրիգահայրութեան գրեթէ բոլոր հաւաքողներին ձեռնհասօրէն հանդիսավարութիւնը ստանձնող Կարէն Մարգարեանը բեմ բարձրացաւ: Նա յիշեց Միջինքը նշելու հոգեւոր ու ազգային պարտաւորութիւնը հայ քրիստոնէային, եւ Խնամակալ մարմնի բոլոր անդամներին մաղթեց յաջողութիւն եւ նորանոր ծրագրերի իրագործում:

Գեղարուեստական կրկիկ յայտագիր կիրարկեց, որի ընթացքում երգերով եւ ամուսնեկերով կամարապէս իրենց մասնակցութիւնը բերեցին Երամիշտ Վարդան Վահրամեանը, Դելիդ Գալստեանը, դրկտ. Արա

եւ Անի Մելիքեանները, Միլա Ալեքսանեանը, Ռեբեկա Մարգարեանը, Ռեբեկա Մարկոսեանը, Ալիդա Յարութիւնեանը եւ Միքո Աբրահամեանը:

Ներկայ բազմութիւնը իր մասնակցութեամբ, ցոյց տուց այն մեծ սերն ու յարգանքը, որը ունեն սոյն միութեան եւ ընդհանրապէս հայ առաքելական մեր եկեղեցու հանդէպ, գնահատելով հայ կանանց եկեղեցանէր ծառայութիւնը:

Խնամակալ մարմնի կանանց միասնական աշխատանքով պահեցողութեան կերակրատեսակներով էին զարդարել սեղանները, պահքի ընթացքում իսկ ճոխութեան ու առատութեան ազգային տոնմիկ նկարագիրը արտայայտելով:

Երեկոյի կարեւոր պահերից մէկը հանդիսացաւ Միջինքի գաթայի հատման պահը: Իւրաքանչիւր սեղանի բախտատարները վերջում մրցեցին իրարու հետ, եւ Թեմական խորհրդի անդամ Քաթրին Դիւնեանը տարւայ բախտատարը ընտրեց: Տեղի ունեցաւ նաեւ վիճակախաղ: Տիրամօր ձեռամբ ընտրեց թիւը, եւ բախտատար հանդիսացաւ Հելենա Օրդուխանեանը:

Այս տարի եւս, Խնամակալ մարմինը գնահատեց յարատեւօրէն եկեղեցի յաճախող անձեր: Կրանց շարքում յատուկ գնահատանքի արժանացաւ Քարմէն Աբրահամեանը, որ ամէն կիրակի Առաքելական նամակը է ընթերցում եկեղեցում:

Քաջալերանքի խօսքով հանդէս եկաւ Պատգամաւորական ժողովի ատենապետուհի Արմինէ Վահրամեանը: Ծրագիրը կազմակերպողների եւ այն յաջողութեամբ վարողների աստուածատուր շնորհները գովաբանեց նա, յատկապէս յիշելով հանդիսավար Կարէն Մարգարեանին, որ Թալրիգում տեղի ունեցող գրեթէ բոլոր ծրագրերի հանդիսավարութիւնն է ստանձնում այնքան ձեռնհասութեամբ: Արմինէ Վահրամեանը կարեւորութեամբ ընդգծեց Խնամակալ մարմնի դերակատարութիւնը ազգային-եկեղեցական կեանքում: Եզրափակիչ եւ օրհնութեան խօսքով, Սրբազան Հայրը իր պատգամը փոխանցեց, բարձր գնահատելով Խնամակալ մարմնի կանանց ծառայութիւնը եկեղեցուն եւ համայնքին. «Թալրիգի եկեղեցիների բարեգործման եւ կանոնաւոր պահպանման գլխաւոր առաքելութիւնը ունենալով իրրեւ նպատակ, Խնամակալ մարմինը միշտ խնամքով է պահպանում մեր եկեղեցիները, սկսեալ Ս. Մարգիս եկեղեցուց, որտեղ ամէն կիրակի ու պատարագ է մատուցում եւ խորհրդակատարութիւններն են տեղի ունենում, Մարայանի ուխտավայր մատուցող, Ս. Աստուածածին մայր եկեղեցին եւ վերջապէս Ս. Շողակաթը»,- ասաց Սրբազան Հայրը: Նոյն առիթով նա շեշտեց, որ Թալրիգը օժտեց նաեւ մնայուն սարկաւազով խորանի վրայ, յանձին Սեւան արկ. Ենովքեանի. «Շեշտ չէր այս ընտրութիւնը, յատկապէս նոր ժամանակներում, երբ երիտասարդութիւնը շուտ եւ շուտ փող աշխատելու համար ամէն միջոցի դիմում է, նոյնիսկ գեղձարարութեան, մի երիտասարդ համաձայնեց իր համեստ ծառայութիւնը բերել եկեղեցուն: Խորանի վրայ եւ ամէն եկեղեցական արարողութիւններին, դրական ներկայութիւն է Սեւանը, որ նախ ինքը պատիւ է զգում Սասնու եկեղեցուն ծառայելու իր գործով»,- ասաց Սրբազան Հայրը եւ յատուկ նշելով պարգեւատրեց նրան: Այս առիթով Սրբազան Հայրը գնահատեց նաեւ սարկաւազաց եւ դպրաց դասերին, «Կոմիտաս» երգչախմբին եւ նրա նիւրեալ խմբավար Երամիշտ Վարդան Վահրամեանին, որոնք իրենց աստուածատուր ձայնով ծաղկեցնում են սուրբ պատարագը:

Իր խօսքի վերջում, Սրբազան Հայրը բարձր գնահատեց Խնամակալ մարմնի անդամներին, գլխաւորութեամբ ատենապետուհի Էմմա Յարութիւնեանի եւ իր ընկերակից վարչականներին՝ Հելենա Օրդուխանեանին, Արմինէ Մազակեանեանին, Ռեբեկա Մարգարեանին եւ Կարինէ Գրիգորեանին, որոնք իրենց ծառայութիւնն են բերում եկեղեցու բարեգործման աշխատանքներին:

Ատրպատականի հայոց թեմի առաջնորդը շնորհաւորեց այսօր. ԱԼԷ Զաշեմին

Ատրպատական, ազգային առաջնորդարան, Թալրիգ-Վերակալի, մարտի 3-ին, Թալրիգի Ուրբաթօրեայ աղօթապետ այսօր. Ալէ Զաշեմին ուղղաձ պաշտօնական նամակով, Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Ս. Գրիգոր արք. Զիֆթճեանը շնորհաւորեց նրան, Իրանի Իսլամական Հանրապետութեան Առաջնորդութեան բանիւսցների խորհրդի 6-րդ շրջանի ընտրութիւններին մեծ յաջողութիւն արձանագրած լինելու առիթով:



Սրբազան Հայրը դուրստելով աղօթապետի անձնուր կրօնաւորի ծառայութիւնը Թալրիգի ժողովրդին, յատկապէս ասում է. «Այն սերն ու յարգանքը, որը Դուք վայելում էք, ի դիմաց Ձեր նիւրեալ ծառայութեանը Աստուծուն եւ համայնքին, Ձեզ այս պատւին է արժանացրել: Ժողովրդի հանդէպ Ձեր անվերապահ գործունէութիւնը, հաւատքի կեանքում նրանց զօրացնելու, ինչպէս նաեւ նրանց համար բարօր կեանք ստեղծելու, Ձեզ արժանացրել է վստահութեան քիչ պատւին: Վստահ եղէք, որ Թալրիգում քեզարկող իւրաքանչիւր հայ, ամենայն ազնւութեամբ իր քիչ տեղ Ձեզ: Մեր թալրիգահայրութեան հանդէպ Ձեր սերն ու հոգածութիւնը նորութիւն չեն մեզ համար: Ձեր հօր խնամատարութիւնը թալրիգահայ համայնքին, յատկապէս Իրան-Իրաք պարտադրեալ պատերազմի ուրակածութեան օրերին, եւ Ձեր կողմից նոյն հոգածու վերաբերմունքի շարունակութիւնը, մեծ յուսով է լցնում մեր համայնքի իւրաքանչիւր անդամի սիրտը»,- գրել է Սրբազան Հայրը:

Շնորհաւորագիրը հայրտուում է Ատրպատականի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի, Թեմական խորհրդի եւ անձնապէս Սրբազան Հօր բարեմաղթանքներով:

«Արարատ»-ի Թալրիգի վարչութիւնը այցելեց Ատրպատականի հայոց թեմի առաջնորդին



Ատրպատական, ազգային առաջնորդարան, Թալրիգ - Շաբաթ, մարտի 2-ին, երեկոյան ժամը 19:30-ին, Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Ս. Գրիգոր արք. Զիֆթճեանը, իր գրասենեակում ընդունեց Հ.Մ.Ա.Գ.-ի Թալրիգի մասնաճիւղի վարչութեան, գլխաւորութեամբ ատենապետ Նժդիկ Աբրահամեանին:

անունից խօսք առնելով շնորհակալութիւն յայտնեց Սրբազան Հօրը, որ Թեմական խորհրդի հետ միասին ամէն հնարաւորութիւն ստեղծել էին հայրենի երգչի եւ նազախմբի ժամանման համար:

Խօսակցութեան նիւթ դարձան Բարեկենդանի սոսի առնչած աստուածութիւններ, որոնք Մեծ Պահոց քառասնօրեայ ժամանակաշրջանի մուտքի նախաստեմն են հանդիսանում: Նոյնպէս գրոյցը տարածեց թեմում միութիւնների եւ կազմակերպութիւնների կեանքի առաջադիմութեան շուրջը, յատկապէս նոր սերնդի ներգրաւումով:

Վարչութիւնը շնորհակալական այցով էր ժամանել առաջնորդարան, կազմակերպութեան անունից երախտագիտութիւն յայտնելու Սրբազան Հօր եւ Թեմական խորհրդին: Յայտնեց, որ Բարեկենդանի սոսի առիթով «Արարատ»-ի Թալրիգի մասնաճիւղը յատուկ ծրագիր էր կազմակերպել «Համագապ Ոսկանեան» սրահում, որտեղ էլ ունեցաւ Մեղրիից ժամանած երգիչը, իր նազախմբով:

Սրբազան Հայրը իր եւ Թեմական խորհրդի գորակցութիւնը յայտնեց «Արարատ»-ի վարչութեան, օրհնելով այն բոլոր աշխատանքները, որոնք առաջիկային իրագործելու են կազմակերպութեան բաժանմունքների միջոցով:

Նժդիկ Աբրահամեանը բոլորի

«Հայկական դրոշակը բարձր պահեցին»

ԴՈՒՏ. ԳՐԱՅՐ ԵՆՊԵՏԵԱՆ



Մարիանա Աբրահամյանը և Լեւոն Պատեմյանը երկու երիտասարդ հայորդիներ են, որոնք հայկական ընտանիք-տուն կազմած են Հայաստանն դուրս՝ Սկոտլանդի Կլարք քաղաքը: Մարիանան երիտասարդ երաժիշտ-դաշնակահար է, որ իր ուսումը նախ ստացած է Նորեգիոյ մէջ, 2014-2016 տարիներուն, ապա հասած է Կլարք և ստացած մագիստրոսի վկայականը՝ իբրև ընկերակցող դաշնակահար: Ան ապա աւելի կատարելագործած է իր ուսումը, երբ վերջերս ստացած է դոկտորական վկայականը՝ նոյն մասնագիտութեան մէջ:

Փետրուար 2024, Սկոտլանդիա:
Կը գրուցէի այս երիտասարդ

զոյգին հետ, որոնք կեանքին կը նային իբրև խոստումալից հայեր՝ բարձր իղէալով և լաւացոյնին ձրգտելով կամքով: Ինչպէ՛ս չունենալ իղէալ և կամք, երբ հայեր են՝ եկած Հայաստանէն, և Մարիանային, իսկ վկայութեամբ՝ «Հայաստանը ամեն ինչ է»:

«Շտանիքիս անդամները հայրենասէր եղած են և մեզի փոխանցեցին ազգային ինքնութիւն ու մայրենի լեզու, որպէսզի խօսիմք և գրենք հայերէն», ըսաւ Մարիանան: Երիտասարդ երաժիշտը ոչ մէկ ճիգ կը խնայէ, որպէսզի հայկական երաժշտութիւնը ներկայացնէ օտարին: Ան երկու անգամ՝ 2018 և 2019 թուականներուն, նազած է Չարլզ իշխանին իր անձնական յաջողութիւնները կերտելով: Ան կը գիտակցի հայուն յաջողութեան և կուզէ իր բաժինը բերել այս գործընթացին մէջ: «Հայութիւնը իմ մէջս է, ըսաւ Մարիանան: Ես հպարտ եմ իմ ազգանունովս և միշտ ալ տեսած եմ, որ հայ ըլլալը բազմաթիւ յաջողութիւններ բերած է ինձի»:

Մարիանան մասունքի նման կը պահէ իր հայկական անձնագիրը: «Ես կուզեմ պահել զայն, նոյնիսկ երբ ուրիշ քաղաքացիութիւն ալ ստանամ»: Մարիանան երախտապարտ հայն ու հայաստանցի քաղաքացին է: «Իբրև երաժիշտ իմ կատարելագործումս կատարեցի Հայաստանէն դուրս, բայց իմ մասնագիտութեան

հիմքը դրած է Հայաստանի մէջ», ըսաւ Մարիանան:
Չուշացաւ Մարիանային գոհունակութիւնը և արժեւորումը: «Ես ստովեցայ լաւագոյն դասախօսներէն Արմէն Բարսիլանեանի շունչին տակ ըսաւ ան, և կուզեմ իմ կատարելագործումս աւելի աշխուժացնել Հայաստանի համար»:
Մարիանան յստակ ըրաւ, որ քաղաքական գործիչ չէ: Այդ մէկը շատ ակնյայտ էր, քանի կը գրուցէի երիտասարդ դաշնակահար-արւեստագէտի մը հետ, որուն սիրտը կը տրոփէ հայուն մշակոյթով: Մըրտի տրոփումներուն մէջէն դուրս կը հանէր իր տաղանդը, որ յստակ կը հանէր իր տաղանդը, որ յստակ կը հանէր իր տաղանդը, որ յստակ կը հանէր իր տաղանդը (Շար. 6-րդ էջում)

Հայկ Ղազարեան. «Ոչ մէկն իր տեղում չէ. բոլորը սկսել են Արցախ նկարել, բայց Արցախի համար մատը մատին չտուեցին»



Քաղաքականութիւնն ու արւեստը շատ արւեստագէտներ փորձում են տարանջատել, բայց 37-ամեայ նկարիչ Հայկ Ղազարեանն իր արւեստում միաւորում է այս երկու բնուէները՝ վստահեցմամբ, որ քաղաքական արւեստն ազդեցիկ է և կարող է երկխօսել մարդու հետ, մարտահրաւեր նետել գերիշխող նորմերին, կանխատեսել իրողութիւնների ընթացքը:
Հայկ Ղազարեանը ծնել է արւեստագէտի ընտանիքում. նրան վրձին բռնել է սովորեցրել հայրը՝ նկարիչ Մելիք Ղազարեանը:
«Նկարել եմ մանկուց: Պրոֆեսիոնալ ուղին սկսել եմ Թերլեմեզեանի անուն գեղարւեստի պետական կոլէջից, ապա նաև Մանկավարժական համալսարանի Գեղարւեստի ֆակուլտետը: Մինչ այդ՝ արդէն ինքնուրուի լիարժէք նկարել գիտէի,

տիրապետում էի տեխնիկային: Մանկավարժական համալսարանում 2-րդ կուրսում ուսումս կիսատ եմ թողել ու գորակոչել ՀՀ ՋՈՒԲ: 2 տարի անց վերադարձել ու շարունակել եմ կրթութիւնս», - 168.am-ի հետ զրոյցում պատմել է Հայկ Ղազարեանը:
Նա նկատել է, որ համալսարանն աւարտելուց յետոյ շատ չի նկարել ու միայն 2018 թուականի յայտնի իրադարձութիւններից յետոյ է հասկացել, որ իր արւեստով պարտաւոր է մարդկանց հետ խօսել:
2018 թուականին նկարել եմ Նիկոլ Փաշինեանի արհաւիրքը
«Մինչև 2018 թուականը եւ չարասան էր ուրիշ, եւ ես էի ուրիշ, եւ նկարներս, բայց «յեղափոխութիւնից յետոյ» նկարեցի այն, ինչ տեսայ: Հէնց 2018 թուականի յունիսին եմ նկարել կարեւորագոյն նկարներիցս մէկը, որում պատկերել եմ Նիկոլ

Փաշինեանի արհաւիրքը: Նկարում պատկերածն այսօր արդէն, ցուօր, տեղի ունեցաւ. այդ նկարում Նիկոլ Փաշինեանին մտրձով եմ պատկերել, ու նա այդ մտրձով քաղաքացիների առաջ կանգնեց 2021 թուականին, նաև Արցախի կորուստն է այդ նկարում պատկերւած, Եռաբլուրի շատացած տապանաբարերը, Արցախի նախագահների գերեզմանները...:
2018 թուականի յուլիսի կէտերին հրապարակել եմ այն, ու դրա պատճառով իմ շրջապատում շատ մարդիկ դադարեցրին ինձ հետ շփումը, քանի որ Նիկոլ Փաշինեանին համարում էին փրկիչ, Քրիստոս, բայց ես գիտէի, որ դա այդպէս չէ», - պատմել է նկարիչը:
Հայկ Ղազարեանն այսօր էլ շարունակում է իր արւեստով անդրադառնալ քաղաքական տարբեր իրողութիւնների: Թէ ինչպէս են ծնւում այդ նկար-կանխատեսումները՝ հարցին նկարչի արձագանքը հակիրճ էր. «Կանգնում եմ կտաւի առաջ, այդ նկարները զայիս են»:
Արւեստագէտը թէեւ Հայաստանի համար պայծառ ապագայ է նկարել, բայց չի շտապում հրապարակել, որովհետև պայքարող տեսակների պակասից յուսահատուած է:
«Ոչ մէկն իր տեղում չէ: ՀՀ-ում ապրող ոչ մի հայ պատրաստ չէ դիմադրելու, մարդիկ համախմբման համար սպասում են առաջնորդի. ես իմ երեխային փրկելու համար ո՛ր առաջնորդի խօսքին պէտք է սպասեմ: Ես իմ արւեստով փորձում եմ խօսել ու բացատրել մարդկանց՝ յանդէլ է նա, ապա դիմել նախ արւեստագէտներին, ապա նաև մեր կողքին ապրող մարդկանց, - նախ



հետնալու կոչով դիմում եմ այն արւեստագէտներին, որոնք միշտ սպասել են, թէ ով կը գայ իշխանութեան, որ գնան նրանց մօտ ինչ-ինչ բաներ խնդրելու. թող բարի լինեն յետ քաշէն ու ճանապարհ տան երիտասարդներին, քանի որ նրանք եւս այս երկրի կործանման հիմքում են կանգնած: Նրանք ոչինչ չարեցին, ոչինչ չփոխանցեցին մարդկանց, իսկ նկարիչն Աստուծոյ խօսքը փոխանցողն է, պատկերողն է նրա, ինչն ուրիշներին տեսանելի չէ: Մասին նկարելով՝ արւեստագէտ չեն դառնում, հիմա էլ սկսել են բոլորն Արցախը նկարել, բայց Արցախի համար մատը մատին չտուեցին:

Իսկ ազգին ուզում եմ յիշեցնել, որ պէտք չէ ծառայամտօրէն վերաբերել փողկապ կրող մարդկանց, քանի որ ցանկացած քաղաքացիական ծառայող հանրութեանը ծառայելու համար է, եւ ոչ թէ հակառակը, ուզում եմ ասել, որ հերթը է սպասեն, որ ինչ-որ մէկն իրենց փոխարէն որոշում պէտք է կայացնի, որ գոյը համարներով իրենց կանանց ու երեխաներին չեն փրկի»:
Հայկ Ղազարեանն իր արւեստը համարում է հայելի, որում երեւոյթներն ու մարդիկ արտացոլում են մարդկային ընկալումների համեմատ, եւ յոյս ունի, որ մի օր իր նկարներում արեւտտ սպասումներն աւելի շատ կը լինեն:

تبریک

جناب دکتر آرا شاورديان

موفقیت و انتخاب مجدد جنابعالی در دوازدهمین دوره انتخابات مجلس شورای اسلامی را صمیمانه تبریک عرض نموده و آرزوی سلامتی و توفیق روزافزون را از ایزد منان خواستارم.

مهدي کاظمي

ՇՆՈՐՀԱԴՈՐԱՆՔ

Շնորհաւորում ենք

Հայ մշակութային «Արարատ»

կազմակերպութեան կողմից հովանաւորող եւ

կազմակերպութեան անդամ

Արա Շահվերդեանին՝

Իրանի Իսլամական խորհրդարանի 12-րդ նստաշրջանի

ընտրութիւններում Թեհրանի եւ

հիւսիսային իրանահայութեան պարզամաւոր

վերընտրելու կապակցութեամբ

եւ մաղթում յաջողութիւններ:

Հ. Մ. «ԱՐԱՐԱՏ» Կ.



ՇՆՈՐՀԱԴՈՐԱՆՔ

Շնորհաւորում ենք

միութեանս կողմից հովանաւորող

դոկտ. Արա Շահվերդեանին

Իրանի Իսլամական խորհրդարանի

12-րդ նստաշրջանի ընտրութիւններին,

ի շնորհիւ ընտրողների մեծ թւով

մասնակցութեամբ եւ վստահած

քւէների մեծ տոկոսի հաւաքագրման, որպէս

պատգամաւոր վերընտրելու կապակցութեամբ:

Մաղթում ենք դոկտ. Արա Շահվերդեանին կանաչ

ճանապարհի եւ յաջողութիւններ իր պատասխանատու

եւ ծանր աշխատանքում:

Հ. Մ. «ՄԻՓԱՆ» ՄԻՈՒԹԻՒՆ



Յարգելի նւիրապու

Շնորհակալ ենք Քո սրտաբուխ նւիրապութեան համար:

«ԱԼԻՔ»-ի սիրտը բարեխում է Քո եւ սրտակից

ընթերցողների շնորհիւ:

Այս դժարին պայմաններում Դուք ներշնչում էք մեզ աւելի

հաւաքք մեր գործին եւ աշխատելու նոր եռանդ, որպէսզի

«ԱԼԻՔ»-ը ամէն օր մուրք գործի Ձեր փուն:

Շարիսկալ տեւ, որ Դուք կաւ:

Յարգանք՝
«ԱԼԻՔ» օրաթերթի
Յայտարարութիւնների բաժին

ՈՒՇԱՐՈՒԹԻՒՆ

Այսու ազգային մարմինների, հիմնարկութիւնների, միութիւնների, դպրոցների եւ ընկերութիւնների ու բոլոր յարգելի ընթերցողների ուշադրութեանն ենք յանձնում, որ իրենց

յայտարարութիւնները օրաթերթիս յանձնեն առ. ժամը 8-ից մինչեւ կ. յ. ժամը 2-ը ամենաուշը երեք օր (աշխատանքային օր) նախքան փրկագրութեան թւականը, բացի մահազդերից, որոնք ընդունում են նաեւ նոյն օրը առաւօտեան՝ մինչեւ ժամը 9-ը:

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ

ՅԱՅՏԱՐՈՒԹԻՒՆ

Օժանդակելու համար օրաթերթիս՝ կարող էք ձեր հին թղթերը յանձնել

«Ալիք» օրաթերթին՝ առաւօտեան ժամը 8-ից մինչեւ ժամը 20:00-ը (Մեծ քանակութեան պարագայում՝ նախապէս համադրելու խնդրանքով հեղեղեալ հասցեով. Հիւսիսային Սոհրեարդի պող., Սոհեթի փողոց, համար 16 Հեռ.՝ 88761154

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ

ԱԼԻՔ

Օրաթերթ

Արտոնատր՝ ԱԼԲԵՆՏ ԱՃԵՍՏԱՆ Հեռախոս՝ (0098-21) 88768567 - 88761154 Հեռապատճէ՛ն՝ 88760994 Փոստարկը՝ 11365-953 Թեհրան - Իրան

روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک
مدیر مسئول: آلبرت عجمیان
خیابان مهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک 16
کدپستی: 1558833911
تهران صندوق پستی: 11365-953
تلفن: 88768567 - 88761154
فکس: 88760994
چاپخانه آلیک

ALIK ARMENIAN DAILY
Add.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave.,
Tehran 15588339 11, Iran P. O. Box: 11365-953
Tel.: (0098-21) 88768567 - 8876 1154
Fax: 88760994
E-mail : info@alikonline.ir
www.alikonline.ir

ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ ԼԻԱՅԵՐԻ ԵՒ ԱՄԱՆ ԼԻԱՅՈՂ ՄԵՇԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈՂՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Հեռ. 26320084 եւ 09124187835, Կահիկի Իսկանդարեան

Computer AGMA
Համակարգչային ընկերութիւն
خرید و فروش کامپیوتر
ارتقاء سیستم
سرویس در محل
سخت افزار
نرم افزار
شبکه
Tel: 88849305 & 88842385
ایرانشهر شمالی، کوچه نوشهر پلاک ۴۲، واحد ۶

ՇՆՈՐՀԱԴՈՐԱՆՔ

Այսու ջերմօրէն շնորհաւորում եմ **պրն. Արա Շահվերդեանին՝** Իրանի Իսլամական խորհրդարանի 12-րդ նստաշրջանի ընտրութիւններում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան կողմից պարզամաւոր ընտրելու առթիւ: Մաղթելով՝ քաջառողջութիւն, ուժ, եռանդ եւ յաջողութիւն Ձեզ՝ անձնական եւ գործնական կեանքում:

«ՍԵԹ» ՍՈՒՐՃԻ ՏՆՕՐԷՆ՝ ԱՐՏԵՍ ԸՆԴՔԱԲԵԱՆ

ՇՆՈՐՀԱԴՈՐԱՆՔ

Մեր ջերմագին շնորհաւորանքներն ենք յայտնում՝ **դոկտ. Արա Շահվերդեանին** ընտրութեան կապակցութեամբ, որպէս Իրանի Իսլամական խորհրդարանի 12-րդ նստաշրջանի ընտրութիւններում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պարզամաւոր: Ցանկանում ենք Ձեզ տրանսպորտ ձեռքբերումներ, յաջողութիւններ եւ այն ուժն ու եռանդը, որը կայ Ձեր մէջ՝ թող լինի յարատեւ:

«ՄԱԹԻ» ՄԻՅԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԳՐԱՎԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

